

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի 17/11/2010թ թիվ 25-Լ որոշմամբ
Փոփոխված է 20/05/2011թ թիվ 56-Լ որոշմամբ
13/12/2013թ թիվ 40-Լ որոշմամբ
27/12/2013թ թիվ 53-Լ որոշմամբ
24/06/2014թ թիվ 24-Լ որոշմամբ
23/06/2015թ թիվ 66-Լ որոշմամբ
21/07/2015թ թիվ 79-Լ որոշմամբ
18/12/2015թ թիվ 99-Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում
«19» փետրվարի 2016թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
_____ Արթուր Զավադյան

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-010

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ**

(ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՊԱՀԱՆՋՆԵՐԻ)

ԵՐԵՎԱՆ - 2015

1. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անդամ ապահովագրական ընկերությունները (այսուհետ՝ ապահովագրական ընկերություններ) անձամբ կամ լիազորված անձանց կամ ապահովագրական գործակալների միջոցով ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս պարտավոր են նախքան ԱՊՊԱ պայմանագիր կնքելը ապահովադրին (նրա կողմից լիազորված անձին) տրամադրել Հավելված 5-ով սահմանված փաստաթուղթը և պահանջել մանրամասն ծանոթանալ: **(1-ին կետը փոփ. է 23/06/2015թ թիվ 66-L և 18/12/2015թ թիվ 99-L)**

1.1. Ապահովագրական ընկերությունները (ներառյալ՝ իրենց լիազորված անձանց կամ ապահովագրական գործակալների միջոցով) առանց հաշվառման համարանիշերի ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս պարտավոր են ապահովադրին (նրա լիազորած անձին) տրամադրել սույն կանոնների Հավելված 2-ով սահմանված և նույն հավելվածով սահմանված կարգով լրացված տեղեկանքը, որն էլ ապահովադրի (նրա լիազորած անձի) կողմից ներկայացվում է իրավասու մարմին՝ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման կամ վերահաշվառման իրականացման նպատակով, իսկ հիմնական հաշվառման համարանիշերով փոխարինման ենթակա հաշվառման համանիշերով ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս պարտավոր են ապահովադրին (նրա լիազորած անձին) տրամադրել սույն կանոնների Հավելված 3-ով սահմանված պարտավորագիրը: Ապահովագրական ընկերությունները պարտավոր են հաշվառել սույն կետի համաձայն տրամադրված տեղեկանքները: **(1.1-րդ կետը լրաց. է 24/06/2014թ թիվ 24-L)**

2. Ապահովագրական ընկերությունները նախքան ԱՊՊԱ պայմանագիր կնքելը (ներառյալ՝ իրենց լիազորված անձանց կամ ապահովագրական գործակալների միջոցով), բայց ոչ շուտ, քան պայմանագրի կնքումից մեկ օր առաջ, պարտավոր են հարցում կատարել Տեղեկատվական համակարգ համապատասխան ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ կնքված ԱՊՊԱ պայմանագրի առկայության և դրա գործողության ժամկետի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Սույն կետով նախատեսված տեղեկությունների հիման վրա ապահովադրին (նրա կողմից լիազորված անձին) պետք է առաջարկվի ընտրել ԱՊՊԱ պայմանագրի գործողության այնպիսի ժամկետ, որը կբացառի միևնույն ժամանակահատվածում մեկից ավելի ԱՊՊԱ պայմանագրերով տվյալ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրումը: Համաժամանակյա (արդեն կնքված պայմանագրի գործողության ժամկետի հետ թեկուզ մեկ րոպեով համընկնող) գործողության ժամկետով պայմանագրի կնքումն արգելվում է և պետք է մերժվի «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքով: Սույն կետով

նախատեսված հարցման գործընթացում պետք է պահպանվեն «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության՝ ԱՊՊԱ պայմանագրի կնքման գործընթացին ներկայացվող պահանջները սահմանող կանոններով նախատեսված անվտանգության ապահովման միջոցները:

3. Սույն կանոնների 2-րդ կետով նախատեսված՝ ԱՊՊԱ պայմանագրի կնքման արգելքը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ թեև այդ կետով նախատեսված տեղեկությունների հիման վրա ապահովադրի (նրա կողմից լիազորված անձի) առաջարկած՝ ԱՊՊԱ պայմանագրի գործողության ժամկետը համընկնում է տվյալ ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ կնքված մեկ այլ ԱՊՊԱ պայմանագրի գործողության ժամկետի հետ, սակայն, ըստ ապահովադրի (նրա կողմից լիազորված անձի) կողմից ներկայացված փաստաթղթերի՝ այդ ԱՊՊԱ պայմանագիրն Օրենքի ուժով վաղաժամկետ դադարել է:

4. Սույն կանոնների 3-րդ կետով սահմանված դեպքում Օրենքի ուժով ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման փաստն արձանագրվում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում և համապատասխան տեղեկատվությունն անմիջապես ուղարկվում է տվյալ ԱՊՊԱ պայմանագիրը կնքած ապահովագրական ընկերությանը:

4.1. Մեկ ԱՊՊԱ պայմանագրով կարող է ապահովագրվել միայն սահմանափակ կամ միայն անսահմանափակ թվով լիազորված տիրապետողներ ունեցող ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը: ԱՊՊԱ պայմանագրի (վկայագրի) գործողության ընթացքում սահմանափակ (անսահմանափակ) թվով լիազորված տիրապետողներով կնքված պայմանագիրը (վկայագիրը) չի կարող փոփոխվել անսահմանափակ (սահմանափակ) թվով լիազորված տիրապետողներով կնքված պայմանագրի (վկայագրի), իսկ ապահովադրի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում ԱՊՊԱ պայմանագիրը ենթակա է կողմերի համաձայնությամբ դադարեցման և համապատասխան պայմանով կնքված նոր ԱՊՊԱ պայմանագրով փոխարինման: **(4.1-րդ կետը լրացվել է 23/06/2015թ թիվ 66-L որոշմամբ)**

4.2. ԱՊՊԱ պայմանագրում մեկ ավտոտրանսպորտային միջոցի համար կարող է նշվել առավելագույնը հինգ լիազորված տիրապետող՝ ներառյալ ապահովադիրը (լիազորված տիրապետող հանդիսանալու դեպքում): **(4.2-րդ կետը լրացվել է 21/07/2015թ թիվ 79-L որոշմամբ)**

5. Ապահովագրական ընկերություններն իրենց (ներառյալ՝ իրենց լիազորված անձանց կամ ապահովագրական գործակալներին) դիմած անձին վերջինիս համար նախընտրելի պայմաններով ԱՊՊԱ պայմանագրի կնքումը մերժելու դեպքում պարտավոր են տվյալ անձի գրավոր դիմումը ստանալու պահից սկսած առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ անձին գրավոր պատասխանել մերժման մասին՝ նշելով նաև մերժման հիմնավորումները:

6. ԱՊՊԱ պայմանագրի կնքման ժամանակ ապահովադրի ներկայացրած բոլոր փաստաթղթերը պատշաճ կերպով պահպանվում և արխիվացվում են համապատասխան ապահովագրական ընկերության կողմից առնվազն 5 տարի ժամկետով: **(6-րդ կետը լրացվել է 23/06/2015թ թիվ 66-Լ որոշմամբ)**

Հավելված
«ԱՊՊԱ պայմանագրի կնքման գործընթացի
նկատմամբ պահանջների» կանոնների
**(ուժը կորցրել է «Հայաստանի ավերապահովագրողների բյուրո» ԻԱՄ
խորհրդի 23.06.2015թ թիվ 66-Լ որոշմամբ)**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք _____
1. (համար)

Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության կնքված պայմանագիր ունենալու մասին

Սույն տեղեկանքը տրվում է _____

_____ 2. (անուն, ազգանուն, հայրանուն (անվանում), անձը հաստատող փաստաթղթի տվյալներ (<ՎՀՀ>))

առ այն, որ վերջինս ունի _____
3. (տույնացման համար և (կամ) թափքի համար և (կամ) շարժիչի համար և (կամ) հենասարքի համար)

ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ _____-ում
4. (ապահովագրական ընկերության անվանում)

կնքված ԱՊՊԱ պայմանագիր:

ԱՊՊԱ պայմանագրի գործողության սկիզբ՝ __/__/20__թ, **ավարտ՝** __/__/20__թ
5. (օո աա տտ) 6. (օո աա տտ)

_____ 7. (ապահովագրական ընկերության անվանում)

_____ 8. (անուն, ազգանուն, ստորագրություն)

Կ.Տ.

_____/_____/20__թ.
9. (օո աա տտ)

Սույնով պարտավորվում եմ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը ստանալուց հետո, անմիջապես ներկայացնել սույն տեղեկանքը տրամադրած անձին՝ ԱՊՊԱ պայմանագրում ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշերը լրացնելու նպատակով, ինչպես նաև պահանջել հաշվառման համարանիշերի նշմամբ ԱՊՊԱ պայմանագիրը (ԱՊՊԱ պայմանագրի լրացումը):

Տեղյակ եմ, որ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը (տեխնիկական անձնագիրը) սույն տեղեկանքը տրամադրած անձին չներկայացնելու (հաշվառման համարանիշերի նշմամբ ԱՊՊԱ պայմանագիր (ԱՊՊԱ պայմանագրի լրացում չունենալու)) դեպքում կարող եմ ենթարկվել վարչական պատասխանատվության:

_____ 11. (անուն, ազգանուն, ստորագրություն)

ՏԵՂԵԿԱՆՔԻ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

1. Տեղեկանքը լրացվում է համակարգչի կիրառման միջոցով:
2. Տեղեկանքի 1-ին դաշտում լրացվում (գեներացվում) է ԱՊՊԱ վկայագրի սերիան և համարը:
3. Տեղեկանքի 2-րդ դաշտում լրացվում է՝
 - 1) ֆիզիկական անձ ապահովադրի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
 - 2) իրավաբանական անձ ապահովադրի դեպքում՝ անվանումը, ՀՎՀՀ-ն,
 - 3) Հայաստանի Հանրապետության դեպքում՝ պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը,
 - 4) օտարերկրյա պետության դեպքում՝ պետության անվանումը և պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը,
 - 5) համայնքի դեպքում՝ համայնքի անվանումը և համայնքի անունից հանդես եկող մարմնի անվանումը,
 - 6) միջազգային կազմակերպության դեպքում՝ միջազգային կազմակերպության անվանումը:
4. Տեղեկանքի 3-րդ դաշտում լրացվում է ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի նույնացման համարը և (կամ) թափքի համարը և (կամ) շարժիչի համարը և (կամ) հենասարքի համարը:
5. Տեղեկանքի 4-րդ և 7-րդ դաշտերում լրացվում է ԱՊՊԱ պայմանագիրը կնքած ապահովագրական ընկերության անվանումը:
6. Տեղեկանքի 5-րդ և 6-րդ դաշտերում լրացվում են համապատասխանաբար ԱՊՊԱ պայմանագրի գործողության սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր/ամիս/տարի ձևաչափով:
7. Տեղեկանքի 8-րդ դաշտում լրացվում է ապահովագրական ընկերության անունից ԱՊՊԱ պայմանագիրը ստորագրած անձի անունը, ազգանունը և ստորագրվում է այդ անձի կողմից:
8. Տեղեկանքի «Կ.Տ.» դաշտում դրվում է ԱՊՊԱ պայմանագիրը կնքած ապահովագրական ընկերության կնիքը:
9. Տեղեկանքի 9-րդ դաշտում լրացվում է տեղեկանքի տրման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձևաչափով:
10. Տեղեկանքը տրամադրող անձը ապահովադրին (նրա լիազորված անձին) տեղեկացնում է վերջինիս՝ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը ներկայացնելու պարտականության և չներկայացնելու հետևանքների մասին, որից հետո ապահովադրի (նրա լիազորված անձը) տեղեկանքի 10-րդ դաշտում կատարում է «✓» նշումը, ինչպես նաև տեղեկանքի 11-րդ դաշտում ստորագրում և լրացնում է անունը, ազգանունը:

Պ Ա Ր Տ Ա Վ Ո Ր Ա Գ Ի Ր _____
(համար)

*Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր
ապահովագրության պայմանագիրը հիմնական հաշվառման համարանիշերով փոխարինման
ենթակա հաշվառման համարանիշերով կնքելուց բխող հավելյալ պարտավորության
վերաբերյալ*

Սույնով պարտավորվում եմ ԱՊՊԱ պայմանագրում նշված հաշվառման համարանիշերը հիմնական հաշվառման համարանիշերով փոխարինելու դեպքում անմիջապես հաշվառման վկայագիրը ներկայացնել սույն պարտավորագիրը տրամադրած անձին (տվյալ ապահովագրական ընկերությանը կամ նրա մասնաճյուղին կամ գործակալին)՝ ԱՊՊԱ պայմանագրում ավտոտրանսպորտային միջոցի փոփոխված հաշվառման համարանիշերը լրացնելու նպատակով:

Տեղյակ եմ, որ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշերի փոխարինման դեպքում ԱՊՊԱ պայմանագրում ավտոտրանսպորտային միջոցի փոփոխված հաշվառման համարանիշերը չլրացվելու դեպքում կարող եմ ենթարկվել վարչական պատասխանատվության:

(ապահովագրական ընկերության անվանում)

(անուն, ազգանուն, ստորագրություն)

___/___/20___թ.
(օօ աա տտ)

(անուն, ազգանուն, ստորագրություն)

(Հավելված 3-ը լրաց. է 24/06/2014թ թիվ 24-Լ)

Հավելված 4
«ԱՊՊԱ պայմանագրի կնքման գործընթացի
նկատմամբ պահանջների» կանոնների
**(ուժը կորցրել է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ
խորհրդի 18.12.2015թ թիվ 99-Լ որոշմամբ)**

ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆՆԵՐ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի հետևյալ կանոններով սահմանված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանները (ԱՊՊԱ պայմանները) հետևյալն են՝

1. «ԱՊՊԱ վկայագրի և դրա հավելվածների ձևը» RL 1-000,
2. «ԱՊՊԱ հիմնարար պայմաններ» RL 1-001,
3. «ԱՊՊԱ վկայագիրը կազմելու և լրացնելու հրահանգ» RL 1-002,
4. «ԱՊՊԱ պայմանագրերի հաշվառման կարգ» RL 1-003,
5. «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական գործակալներին վճարվող միջնորդավճարների առավելագույն չափ» RL 1-006,
6. «ԱՊՊԱ պայմանագրի կնքման ժամանակ պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկ» RL 1-007,
7. «ԱՊՊԱ ոլորտում չհատուցվող գումարի չափը» RL 1-008,
8. «ԱՊՊԱ ոլորտում հիմնական և բազային ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերի և ռիսկային գործակիցների թույլատրելի արժեքների չափը» RL 1-009,
9. «ԱՊՊԱ պայմանագրի կնքման և փոփոխման գործընթացի նկատմամբ պահանջներ» RL 1-010,
10. ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ անդամ ապահովագրական ընկերությունների կողմից ԱՊՊԱ ոլորտում իրականացվող գովազդի նկատմամբ պահանջներ» RL 1-011,
11. «ԱՊՊԱ պայմանագիրը լրացնելիս և ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրավճարի չափի հաշվարկում ավտոտրանսպորտային միջոցի շարժիչի հզորությունը որոշելու համար հիմք ընդունվող ինտերնետային կայքերի ցանկ» RL 1-012,
12. «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի ու մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» RL 1-013,
13. «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննություն իրականացնող փորձագետների որակավորման, նրանց հետ

- կնքվող պայմանագրերի գրանցման և ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննության կանոններ» RL 1-014,
14. «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով տուժողին պատկանող գույքի ոչնչացման (80% և ավելի վնասի) դեպքում գույքի մնացորդային արժեքների հաշվարկման մեթոդաբանության կանոններ» RL 1-015,
15. «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական ընկերությունների կողմից պահովագրական հատուցումների վճարման» RL 1-017,
16. ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո ԻԱՄ կողմից երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցումների վճարման կանոններ» RL 1-018
17. «Երաշխավորման ֆոնդի կանոններ» RL 1-020,
18. ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անդամ ապահովագրական ընկերությունների նկատմամբ կիրառվող տուգանքի առավելագույն չափը» RL 1-021,
19. ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անդամ ապահովագրական ընկերությունների կողմից իրենց մասնաճյուղերի և ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնող անձանց վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կանոններ» RL 1-022,
20. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առողջությանը պատճառված վնասների և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող բժշկական հաստատությունների ցանկ RL 1-024,
21. «Տուժողին պատճառված վնասը «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առողջությանը պատճառված վնասների ցանկում ընդգրկելու մասին բժշկական հանձնաժողովի կողմից որոշման ընդունման» RL 1-025,
22. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) պայմաններով սահմանված պահանջների պարտադիր կիրառելիության» RL 1-026,
23. ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-027,
24. «ԱՊՊԱ ոլորտում հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքի կիրառման» RL 1-028,

- 25.«Պատահարների գրանցման և սպասարկման գործընթացի նկատմամբ պահանջները» RL 1-029,
- 26.«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով տուժողի առողջությանը պատճառված վնասների գծով բժշկի ցուցումով բուժման շարունակականության (ամբուլատոր-ռեաբիլիտացիոն բուժման) ապահովմանն ուղղված միջոցառումների հետ կապված և այլ ծախսերի հատուցման ենթակա սահմանաչափերը և այդ ծախսերի անհրաժեշտության, հիմնավորվածության և փաստացի ապացուցվածության չափանիշների» RL 1-031,
- 27.«ԱՊՊԱ ոլորտում լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նշանակման կանոններ» RL 1-032,
- 28.««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ կողմից բողոք-պահանջների քննության» RL 1-033,
- 29.«Համալիր ստուգման արդյունքներով ապահովագրական ընկերությունների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման մեթոդաբանությունը» RL 1-034,
30. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անդամ ապահովագրական ընկերությունների կողմից Բյուրո ներկայացվող հաշվետվությունների ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգն ու ժամկետները և լրացման հրահանգը » RL 1-035,
31. «ԱՊՊԱ պայմանագրի կնքման գործընթացին ներկայացվող պահանջների» RL 1-038,
- 32.«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից գանձվող անդամավճարների և անդամավճարները չվճարելու համար գանձվող տույժերի սահմանաչափերի » RL 1-039,
- 33.«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների հաշվարկման ժամանակ բոնուս-մալուս համակարգի կիրառման» RL 1-040,
- 34.«ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատմության ստացման, վերանայման և բողոքարկման» RL 1-041,
- 35.«Տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվության ուղղման» RL 1-042,
- 36.«ԱՄՄՊ ծառայության դիմաց վճարների բաշխման և «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությանը նոր անդամակցած ապահովագրական ընկերության կողմից ԱՄՄՊ ծառայությանը միանալու մուտքի վճարի» RL 1-043,
- 37.«ԱՊՊԱ պատահարում մեղավորության որոշման մեթոդաբանությունը» RL 1-044,
- 38.««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ կողմից մասնագիտական գիտելիքների ստուգման» RL 1-045: